

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10.05.2019

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 21 անդամներից 18-ը

### ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-2019 ուստարվա երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպական աշխատանքների մասին հաշվետվություն: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/

2. 2018-2019 ուստարվա գարնանային քննաշրջանի կազմակերպչական աշխատանքների մասին հաշվետվություն: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/

3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կրթական ծրագրերի 2019-2023 ուստարվա ուսումնական պլանների քննարկման և հաստատման մասին: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/

4. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կրթական ծրագրերի 2019-2020 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/

5. Ընթացիկ հարցեր:

### ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը /01.06.19-08.06.19թթ./: Զեկուցողը նշեց, որ քննաշրջանը քննարկվել է ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան՝ մատենավարության վիճակը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

*Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը:*

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

*2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:*

**ԼՍԵՑԻՆ.**

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանը: Ջեկուցողը նշեց, որ գարնանային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը: Վերստին անդրադարձ կատարվեց այն խնդրին, որ քննությունների ընթացքում դասախոսները պետք է դրսևորեն միանգամայն անաչառ վերաբերմունք՝ օբյեկտիվորեն խիստ լինելով հատկապես I և II կուրսերի ուսանողների նկատմամբ: Ուսանողը պետք է քննասենյակից հեռանա իր ստացած միավորի հավաստիության համոզվածությամբ: Դեկանը ՈԻԽ և ՈԻԳԸ ուսանողներին հորդորեց ներկա գտնվել քննական գործընթացներում՝ կանխելու հնարավոր սուբյեկտիվիզմը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

*Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը:*

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

*2018-2019 ուստարվա գարնանային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:*

## **ԼՍԵՑԻՆ.**

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց, որ ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն անհրաժեշտ է քննարկել և հաստատել «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Հոգեբանություն» կրթական ծրագրերի 2019–2023 ուսումնական պլանի նախագծերը: Նկատի ունենալով, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը առաջնորդվում է ԵՊՀ –ի համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններով, ուստի ֆակուլտետի ամբիոնները կարող են առաջնորդվել ԵՊՀ համապատասխան մասնագիտության ուսումնական պլանով, սակայն կարող են կատարել որոշակի փոփոխություններ (սահմանափակ)՝ ելնելով մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններից:

Կ. Պողոսյանը ներկայացրեց 2019–2023թթ. կրթական ուսումնական պլանների նախագծերը, որոնք քննարկվել են ամբիոնների նիստերում:

## **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

*Պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, հ.գ.թ. Լ. Մարգարյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, դաս. Շ. Գրիգորյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:*

Նրանք նշեցին, որ ներկայացված 2019-2023 կրթական ծրագրերի ուսումնական պլանների նախագծերը համապատասխանում են ներկայացվող պահանջներին, և առաջարկեցին հաստատել: Նիստի մասնակիցների կողմից առաջարկություններ և դիտողություններ չեղան: 2019–2023 ուսումնական պլանի ներկայացված նախագծերը ընդհանուր առմամբ համարեցին համապատասխան կրթական ծրագրերի պահանջներին:

## **ՈՐՈՇԵՑԻՆ**

Հաստատել ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերի 2019–2023 ուսումնական պլանի նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

## **ԼՍԵՑԻՆ.**

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց, որ 2019-2020 ուստարվա «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերի աշխատանքային ուսումնական պլանները կազմվել են՝ ելնելով նախորդ տարիների ուսումնական պլաններից:

2019-2020 աշխատանքային ուսումնական պլանների ժամանակին քննարկման և հաստատման հարցը շատ կարևոր է ամբիոնների աշխատանքների կազմակերպման համար, որովհետև դրա հիման վրա պետք է անմիջապես սկսել ամբիոնային և անհատական բեռնվածությունների կազմման աշխատանքները:

Նա նշեց, որ 2019-2020 աշխատանքային ուսումնական պլանների նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին, և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

## **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Բ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, հ.գ.թ. Լ. Մարգարյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, դաս. Շ. Գրիգորյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

## *ՈՐՈՇԵՑԻՆ*

*Հաստատել ֆակուլտետի 2019-2020 ուստարվա «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերի ուսումնական աշխատանքային պլանների նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:*

Օրակարգում ընդգրկված էր նաև ընթացիկ մեկ հարց՝

*ա) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կրթական ծրագրերի կուրատորների տարեկան հաշվետվությունները:*

Ընթացիկ հարցի վերաբերյալ ելույթ ունեցան կրթական ծրագրերի կուրատորները: «Պատմություն» կրթական ծրագրի I կուրսի կուրատոր Ն. Ճաղարյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա հաշվետվությունը: Նա նշեց, որ հաշվետու տարում «Պատմություն» կրթական ծրագրի I կուրսի ուսանողների հետ /1-ին կիսամյակ 5 ուսանող, 2-րդ կիսամյակ՝ 6 ուսանող/ ուսումնական խորհրդատուի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ուսումնական տարվա սկզբին առաջին կուրսի ուսանողներին ներկայացվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդհանուր կառուցվածքն ու ուսումնական գործընթացի կանոնակարգը: Ըստ համապատասխան կանոնակարգի՝ ուսանողները ծանոթացել են իրենց իրավունքներին ու պարտականություններին, ուսումնառության կրեդիտային համակարգի սկզբունքներին, կրթագրքից օգտվելու կարգին:

- Ուսումնառության ընթացքում, ըստ համապատասխան ժամանակացույցի, ինչպես նաև ժամանակացույցից դուրս, հանդիպումներ են կայացել ՀԳ ֆակուլտետի «Պատմություն» կրթական ծրագրի I կուրսի ուսանողների հետ:

- Ուսանողներին նախօրոք ներկայացվել է եզրափակիչ գնահատմամբ և առանց եզրափակիչ գնահատման դասընթացների առարկայական ցանկը՝ ըստ համապատասխան կրեդիտների:

- Ուսանողներին տեղեկացվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կարգի մասին:

Առաջին և երկրորդ կիսամյակների ընթացքում մշտադիտարկման տակ են եղել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացները /գործնական և սեմինար պարապմունքներ, ընթացիկ ստուգումներ և քննություններ/: Ուսանողներին ներկայացվել է քննությունների բողոքարկման կարգը, լուծարքային շրջանի անցկացման կարգը:

Երկրորդ կիսամյակի ընթացքում առաջին կուրսի ուսանողների թիվն ավելացել է ևս մեկ ուսանողով: Ուսանողներից երեքը անդամակցում են Ուսանողական խորհրդին (ՈւԽ) և Ուսանողական գիտական ընկերությանը (ՈւԳԸ) և իրենց ակտիվ մասնակցությունն են ունենում մասնաճյուղում ընթացող ուսանողական միջոցառումներին:

Ամփոփելով առաջին կիսամյակի քննաշրջանի պատկերը՝ ստացվում է հետևյալը. «Պատմություն» կրթական ծրագրի I կուրսի 5 ուսանողներից բոլոր առարկաներից «լավ» գնահատական է ստացել 1 ուսանող, «բավարար» գնահատական՝ 2 ուսանող, խառը գնահատական՝ 1 ուսանող, իսկ անբավարար գնահատական՝ 1 ուսանող, Այսպիսով՝ «Պատմություն» մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմում է 80%, իսկ կրթական որակը՝ 20%: Քննություններն անցել են առանց բողոքարկումների և հանգիստ մթնոլորտում:

Քանի որ դեռևս շարունակվում է երկրորդ կիսամյակի քննաշրջանը, ուստի երկրորդ կիսամյակի կտրվածքով կներկայացվի միայն ընթացիկ քննությունների ընդհանուր պատկերը, համաձայն որի՝ երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննություններից «Պատմություն» մասնագիտության առաջին կուրսի 6 ուսանողից «Հայոց պատմություն-2» առարկայից 2 ուսանող ստացել է 3 միավոր, 2 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր և մեկ ուսանող՝ անբավարար գնահատական: «Հին Հունաստանի և Հռոմի պատմություն» առարկայից 1 ուսանող ստացել է 4 միավոր, 1 ուսանող՝ 3 միավոր, 2 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր, իսկ մեկ ուսանող չի ներկայացել ընթացիկ քննության: Երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննություններին «Հայոց պատմություն-2» առարկայից 6 ուսանողից 1 ուսանող ստացել է 4 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր և երկու ուսանող՝ անբավարար գնահատական: «Հին Հունաստանի և Հռոմի պատմություն» առարկայից 1 ուսանող ստացել է 4 միավոր, 2 ուսանող՝ 3 միավոր, 1 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր և մեկ ուսանող՝ անբավարար գնահատական:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի I կուրսի կուրստոր Վ. Մելիքսեթյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա հաշվետվությունը: Նա նշեց, որ հաշվետու տարում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի I կուրսի ուսանողների հետ /17 ուսանող/ ուսումնական խորհրդատուի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Լսարաններում փակցվել են եզրափակիչ գնահատմամբ, առանց եզրափակիչ գնահատման, առանց ընթացիկ գնահատման և ստուգարքային դասընթացների առարկայական ցանկերը՝ ըստ համապատասխան կրեդիտների:

- Ուսանողներին ներկայացվել է դասընթացների գնահատման կարգերը:

- Վերահսկվել է ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների անցկացման գործընթացը:

- Ուսանողներին տեղեկացվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կարգը: Որոշված ժամանակահատվածում հավաքվել են համապատասխան փաստաթղթեր և ներկայացվել ֆակուլտետի մանդատային խորհրդին:

- Ուսանողներին տրամադրվել է համապատասխան խորհրդատվություն և օգնություն՝ ուսումնական գործընթացին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ:

- Ուսանողներին տրամադրվել են ուսումնական գործընթացներին առնչվող տեղեկատվական նյութեր:

- Վերահսկվել են ուսանողների հաճախումներն ու կարգապահությունը:

- Յուրաքանչյուր ամիս ամփոփվել են ուսանողների հաճախումները և ձեռնարկվել համապատասխան քայլեր /դիտողություն, գրավոր նկատողություն/:

- Հաշվետու ժամանակահատվածում ուսանողները մասնակցել են մասնաճյուղի գիտահասարակական միջոցառումների:

Ամփոփելով առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները՝ նշենք, որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի I կուրսի ուսանողներից միայն գերազանց գնահատական ոչ ոք չի ստացել, միայն գերազանց և լավ գնահատականներ՝ 5 ուսանող, խառը գնահատականներ՝ 10 ուսանող, միայն բավարար՝ 0, անբավարար գնահատականներ ստացել են 2 ուսանող: Կուրսի բացարձակ առաջադիմությունը կազմել է 88.24%:

Քանի որ դեռևս շարունակվում է երկրորդ կիսամյակի քննաշրջանը, ուստի երկրորդ կիսամյակի կտրվածքով կներկայացվի միայն ընթացիկ քննությունների ընդհանուր պատկերը, համաձայն որի՝ երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննություններից «ՏՄՄ» մասնագիտության առաջին կուրսի 17 ուսանողից «Մանկավարժության տեսություն» առարկայից 7 ուսանող ստացել է 3 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր, 5 ուսանող՝ 1 միավոր և 2 ուսանող՝ անբավարար գնահատական: «Մաթեմատիկա B-2» առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր, 3 ուսանող ստացել է 4 միավոր, 3 ուսանող՝ 3 միավոր, 4 ուսանող՝ 2 միավոր, 3 ուսանող՝ 1 միավոր, իսկ 2 ուսանող անբավարար՝ գնահատական: Երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննություններին «Մանկավարժության տեսություն» առարկայից 17 ուսանողից 2 ուսանող ստացել է 5 միավոր, 4 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 3 միավոր, 7 ուսանող՝ 2 միավոր, 1 ուսանող՝ 1 միավոր: «Մաթեմատիկա B-2» առարկայից 5 ուսանող ստացել է 5 միավոր, 3 ուսանող՝ 4 միավոր, 3 ուսանող՝ 3 միավոր, 3 ուսանող՝ 2 միավոր և 3 ուսանող՝ 1 միավոր:

«Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրի I կուրսի կուրստոր Ս. Օհանյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա հաշվետվությունը: Նա նշեց, որ հաշվետու տարում «Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրի I կուրսի ուսանողների հետ /10 ուսանող/ ուսումնական խորհրդատուի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Առաջին իսկ հանդիպման ժամանակ ուսանողներին ներկայացվել է ԵՊՀ ԻՄ հիմնադրման պատմությունը:
- Ուսանողներին տրամադրվել է համապատասխան խորհրդատվություն և օգնություն՝ ուսումնական գործընթացին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ:
- Ուսանողներին ներկայացվել են դասընթացների գնահատման կարգերը:
- Լսարաններում փակցվել են եզրափակիչ գնահատմամբ, առանց եզրափակիչ գնահատման, առանց ընթացիկ գնահատման և ստուգարքային դասընթացների առարկայական ցանկերը՝ ըստ համապատասխան կրեդիտների:
- Ուսանողներին տեղեկացվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կարգը: Որոշված ժամանակահատվածում հավաքվել են համապատասխան փաստաթղթեր և ներկայացվել ֆակուլտետի մանդատային խորհրդին:



• Ուսանողներին տրամադրվել են ուսումնական գործընթացներին առնչվող տեղեկատվական նյութեր:

• Վերահսկվել են ուսանողների հաճախումներն ու կարգապահությունը:

• Յուրաքանչյուր ամիս ամփոփվել են ուսանողների հաճախումները և ձեռնարկվել համապատասխան քայլեր /դիտողություն, գրավոր նկատողություն/:

• Ուսանողները մասնակցել են մասնաճյուղի գիտահասարակական միջոցառումների, մասնավորապես Հայաստանում հոկտեմբերին ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին ընդառաջ՝ բուհում կայացած «Փարիզը և նրա տեսարժան վայրերը» թեմայով միջոցառմանը և մարտին կրկին ֆրանկոֆոնիայի շրջանակներում Շառլ Ազնավուրին նվիրված միջոցառմանը:

• Վերահսկվել է ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների անցկացման գործընթացը:

«Օտար լեզու և գրականություն» I կուրսի I կիսամյակի քննաշրջանի արդյունքներն են՝ միայն գերազանց և միայն բավարար գնահատական չի ստացել ոչ մի ուսանող, միայն գերազանց և լավ ստացել է՝ 7, խառը գնահատական՝ 3 ուսանող: Բացարձակ առաջադիմությունը կազմում է 100%:

Երկրորդ կիսամյակի տարեվերջյան քննությունները ընթացքի մեջ լինելու պատճառով ներկայացվել է միայն ընթացիկ քննությունների ընդհանուր պատկերը.

***I ընթացիկ քննությունների արդյունքները.***

- ***Ֆրանսերեն լեզու-2*** առարկայից 3 ուսանող ստացել է 5 միավոր  
5 ուսանող՝ 4 միավոր  
2 ուսանող՝ 3 միավոր
- ***Անգլերեն լեզու-2*** առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր  
1 ուսանող՝ 4 միավոր  
4 ուսանող՝ 3 միավոր  
3 ուսանող՝ 2 միավոր

***II ընթացիկ քննությունների արդյունքները.***

- ***Ֆրանսերեն լեզու-2*** առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր  
7 ուսանող՝ 4 միավոր  
1 ուսանող՝ 3 միավոր
- ***Անգլերեն լեզու-2*** առարկայից 3 ուսանող ստացել է 5 միավոր

4 ուսանող՝	4 միավոր
1 ուսանող՝	3 միավոր
2 ուսանող՝	2 միավոր

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, հ.գ.թ. Լ. Սարգսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, դաս. Շ. Գրիգորյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ**

2018-2019 ուստարվա ընթացքում կուրատորների կատարած աշխատանքները գնահատել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ. Պողոսյան  
Վ. Աղաբաբյան